



# Բազմալեզվություն՝

կենսական  
հնարավորությունների  
քազմազանություն



## Բազմալեզվություն՝ կենսական հնարավորությունների բազմազանություն

Լեզուն անհրաժեշտ է մարդկանց միջև շփման և հաղորդակցության համար:

Լեզուն մարդկանց միջև կամրջի դեր է կատարում. Որքան **ավելի շատ** լեզու իմանաս, այնքան շատ մարդկանց հետ կարող ես շփում հաստատել:

Մենք՝ ծնողներս, ցանկանում ենք, որ մշտապես փոփոխական միջավայրում մեր երեխաների սերունդը շատ ավելի լավ կարողանա կողմնորոշվել, քան՝ մերը, և լինի երջանիկ, գոհ իր կյանքից և գործունեությունից՝ ավելի ին հասնի, ինքնահաստատվի՝ իր կարիերայում և աշխատանքում հասնելով մեծ բարձունքների:

Յուրաքանչյուր լեզու, որին կտիրապետեն, և որը կօգտագործեն մեր երեխաները, նրանց համար նոր հնարավորություններ կստեղծի՝ տարբեր մարդկանց հետ շփվելու, նրանց հետ աշխատելու, նրանց մշակույթին և կենսակերպին ծանոթանալու համար: Հարկ է նաև նշել, որ այսօրվա աշխարհում բարձր է գնահատվում լեզուների իմացությունը. նրա համար, ով տիրապետում է մի քանի

լեզուների, գործնականում երաշխավորված է բարձր վարձատրվող աշխատատեղը:

Վերջին տասնամյակների ընթացքում Եվրոպայի Խորհուրդը ակտիվացրել է աշխատանքները փոքրամասնությունների լեզուների իրավունքների պաշտպանության, նրանց լեզուների պահպանման և աջակցության համար: Այս համատեքստում բազմալեզու կրթությունը (բազմալեզվությունը) համարվում է լավագույն ուղին: Բազմալեզվություն. սա մարդու հնարավորությունն է կենսական իրավիճակներում պրագմատիկորեն օգտագործելու մի շարք լեզուներ:

Ժամանակակից աշխարհում ամեն մարդ ձգտում է բազմալեզու լինել, որպեսզի ինքն ավելի լավ հնարավորություններ ունենա, քան նրանք, ովքեր միայն իրենց մայրենի լեզվին են տիրապետում: Ներկայում, անընդհատ փոփոխվող եվրոպական մշակութային տարածքում բազմալեզվությունը նորմ է:

Մայրենի լեզվի զարգացումը կարևոր նշանակություն ունի երկրորդ լեզուն հաջողությամբ սովորելու համար: Մայրենի լեզվի՝ տարիքային նորմերին համապատասխան զարգացումը նշանակում է, որ երեխայի մոտ պատկերացում է ստեղծվել լեզվի, որպես համակարգի վերաբերյալ, ինչը հանդիսանում է երկրորդ լեզվի ուսումնասիրման պայման:

Եթե ցանկանում եք, որ ձեր երեխան մի քանի լեզուներով խոսի, նախ՝ աջակցե՛ք նրա մայրենի խոսքի զարգացմանը և, մինևույն ժամանակ, օգնե՛ք նրան տիրապետել երկրորդ լեզվին. այս երկու նպատակները միմյանց չեն խանգարում:

## **Ինչո՞ւ է կարևոր բազմալեզու կրթությունը Վրաստանի համար:**

Վրաստանը բազմազգ և բազմալեզու երկիր է:

Վրաստանում ապրող ազգային փոքրամասնությունները հոգ են տանում իրենց ազգային լեզուների պահպանման և զարգացման մասին, այդ թվում նաև՝ իրենց երեխաների համար ընտրելով պարտադիր կրթությունը մայրենի լեզվով:

Վրաստանում պաշտոնական կամ պետական լեզուն վրացերենն է, որի իմացությունը կարևոր միջոց է բազմազգ և բազմալեզու Վրաստանի բնակչության բոլոր քաղաքացիների՝ հասարակությանն ինտեգրվելու համար:

Տվյալ պահին ազգային փոքրամասնությունների երիտասարդ ներկայացուցիչների՝ պետական լեզվի իմացության մակարդակը բավարար չէ նրա համար, որպեսզի ոչ վրացական դպրոցների շրջանավարտները կարողանան իրենց կրթությունը պետական համալսարաններում շարունակել վրաց լեզվով: Այս

իրավիճակը բացահայտ մատնանշում է, որ վրաց լեզվի ուսուցումը միայն որպես առարկա բավական չէ նրա համար, որպեսզի աշակերտները անհրաժեշտ մակարդակով տիրապետեն վրաց լեզվին: Խնդրի արդյունավետ լուծումը առարկայի և լեզվի ինտեգրված ուսուցումն է (CLIL):

### **Ի՞նչ է լեզվի և առարկայի ինտեգրված ուսուցումը (CLIL)**

Լեզվի և առարկայի ինտեգրված ուսուցումը (CLIL) բազմալեզու կրթության մեթոդաբանություններից մեկն է: Այս մեթոդիկայի կիրառման ժամանակ աշակերտներն առարկան (Բնագիտություն, Պատմություն, Կենսաբանություն) անցնում են ոչ մայրենի լեզվով: Ինտեգրված դասի տարբերությունը մայրենի լեզվով առարկայի սովորական դասից միայն դասավանդման լեզվի մեջ չի կայանում. ինտեգրված դասը տարբերակում է աշակերտների լեզվական կարողությունների նպատակատուղված զարգացումը և ակտիվ ու խաղային ուսուցման տարբեր մեթոդների կիրառումը: Հընթացս աշակերտները առարկան սովորում են ուսուցման պետական ծրագրի պահանջներին համապատասխան:

**Վրաստանի դպրոցներում ինչպե՞ս է իրականացվում  
առարկայի և լեզվի ինտեգրված ուսուցումը:**

Սկսած 2018/2019 ուսումնական տարվանից ազգային փոքրամասնությունների 20 պիլոտային դպրոցներում երրորդ դասարանում Բնագիտությունը սկսեցին դասավանդել վրաց լեզվով: Այս առարկայի բովանդակությունը երեխային շրջապատող աշխարհն է, որը մոտ և հասկանալի է նրան: Ճիշտ այսպիսի առարկան է հոյակապ հնարավորություն առարկայի և լեզվի ինտեգրված ուսուցմանը ծանոթանալու համար, քանի որ աշակերտն իրեն հարմարավետ և վստահ է զգում՝ շրջապատող աշխարհի մասին նոր գիտելիքներ ստանալու և իր լեզվական կարողությունների զարգացման համար օգտագործելով այնպիսի բառեր, որոնք նրան ծանոթ են վրաց լեզվի դասից:

Ինչպե՞ս է անցնում ինտեգրված դասը: Բնագիտության դասն անցնում է վրաց լեզվով: Ուսուցիչը նոր նյութը բացատրելու համար օգտագործում է երեխաներին ծանոթ բառեր և աստիճանաբար ներմուծում է նոր բառեր, որոնք աշակերտներն ամրապնդում են՝ կատարելով տարբեր վարժություններ: Ուսուցիչն օգտագործում է շատ դիդակտիկ նյութեր և տարբեր տեսակի առաջադրանքներ, այդ թվում՝ առաջադրանքներ գույգերով և խմբերով աշխատանքի համար:

Իսկ եթե աշակերտը չի հասկանում ուսուցչին: Բնագիտության ուսուցումը վրաց լեզվով սկսում է վրաց լեզվից աշակերտին արդեն ծանոթ բառերով, որոնք երեխաները սկսել են սովորել առաջին դասարանում: Բնագիտության և վրաց լեզվի ուսուցիչներն իրենց դասերը միասին են պլանավորում, այնպես, որ լեզվի դասերի ժամանակ երեխաները կրկնեն և ամրապնդեն այն բառերը, որոնք արդեն սովորել են Բնագիտության դասերի ժամանակ: Իսկ եթե դասի ժամանակ ստեղծվի իրավիճակ, երբ աշակերտը չի հասկանում ուսուցչին, ուսուցիչը բացատրում է թեման՝ օգտագործելով երեխային ծանոթ բառեր, դիդակտիկ նյութեր կամ ուրիշ աշակերտների օգնություն:

### **Ինչո՞ւ հենց առարկայի և լեզվի ինտեգրված ուսուցում:**

Առարկայի և լեզվի ինտեգրված ուսուցումը հնարավորություն է միաժամանակ սովորելու առարկան և զարգացնելու լեզվական կարողությունները: Ինտեգրված ուսուցման ներմուծումն առանձին առարկաների ձևով, օրինակ, Բնագիտության, չի սպառնում երեխայի մայրենի լեզվին և չի խոչընդոտում տվյալ առարկայի ուսուցմանը: Բացի այդ, առարկայի ոչ մայրենի, օրինակ, վրաց լեզվով, ուսուցումը նշանակալիորեն բարելավում է տվյալ լեզվի կարողությունները: Եթե լեզուն ուսուցանվում է

միայն որպես առարկա, դրա յուրացման համար անհրաժեշտ է 9 տարի, այն դեպքում, երբ լեզվի կիրառումը առարկայի ուսուցման ժամանակ կրճատում է դրա յուրացման ժամանակը առնվազն երկու անգամ:

Ծնողները երբեմն զգուշանում են, որ աշակերտները երկրորդ լեզվի սահմանափակ իմացության պատճառով չկարողանան տիրապետել ուսումնական առարկային, ինչը կարող է հանգեցնել ակադեմիական առումով նրանց հետ մնալուն, ինչը կարող է վնաս հասցնել առարկայի Ազգային ուսումնական ծրագրին (Մաթեմատիկա, Ֆիզիկա, Աշխարհագրություն և այլն), որի աղյուսները բավարարելը պարտադիր է բոլոր առարկաներից: Դա այդպես չէ. բազմաթիվ հետազոտություններ են անցկացվել, փորձը ցույց է տվել որ երկրորդ լեզվի կիրառումը, որպես ուսուցման լեզու, ոչ թե խոչընդոտում է, այլ՝ նպաստում աշակերտների առարկայական իրավասությունների զարգացմանը:

Լեզվի և առարկայի ինտեգրված ուսուցման մոտեցման կիրառումը Վրաստանի ոչ վրացական դպրոցներում ոչ միայն **անհրաժեշտ** է, այլ նաև՝ **պարտադիր**. միալեզու ոչ վրացալեզու դպրոցներում, գործնականում, պետական լեզվի ուսուցումն իրականացվում է միայն վրացերենի դասերին: Դպրոցական և ոչ դպրոցական միջավայրը ամբողջությամբ ոչ վրացական է:



Հետևաբար, պետական լեզվի գործունեության ոլորտի ավելացումը տարբեր համատեքստերում (այդ թվում նաև դպրոցական միջավայրում, առարկայական դասերի ժամանակ) կենսականորեն անհրաժեշտ է:

### **Առաջինը միշտ առաջինն է:**

Այնպիսի հայտնի լեզվաբաններ և մանկավարժներ, ինչպիսիք են Պիաժեն և Վիգոդսկին, երկրորդ լեզվի ուսուցման գործընթացում կարևոր նշանակություն են շնորհում մայրենի լեզվի դերին, այսինքն՝ այն լեզվի դերին, որով երեխան խոսում է ընտանիքում: 1990-ական թվականներից լեզվաբանները, մանկավարժները և նյարդաբանները երեխաների լեզվական և ճանաչողական զարգացման վերաբերյալ ինտենսիվ հետազոտություններ են անցկացնում դպրոցի տարրական աստիճանում, լեզվական բազմազան միջավայրի պայմաններում: Դա հաստատվում է նաև Բեյքերի, Վուդի և Թոմաս / Քոլիերի ուսումնասիրությունների արդյունքներով: Վիգոդսկու և Պիաժեի տեսակետները երեխայի ընդհանուր զարգացման գործում ուսուցման լեզվի կարևորության վերաբերյալ հաստատում են նրանց իսկ կողմից անցկացված հետազոտությունները:

Միալեզու (մայրենի լեզվով) դպրոցում սովորել սկսելը, առաջին հայացքից, երեխայի համար լավագույն տարբերակն է, նման դասարանում նա իրեն հարմարավետ է զգում և նորմալ էլ զարգանում է, բայց դառնում է միալեզու: Խնդիրներ առաջանում են դպրոցն ավարտելուց հետո, երբ ժամանակն է հետագա կրթությունը շարունակելու կամ հարմար աշխատանք գտնելու: Հենց այդ ժամանակ նրան անհրաժեշտ կլինի պետական (վրաց) լեզվի բարձր մակարդակով իմացությունը, ինչին, ինչպես արդեն նշվել է բազմիցս, հնարավոր չէ հասնել միայն վրացերենի, որպես առարկայի, թեկուզ և խորացված ուսուցման միջոցով: Առավել ևս, եթե դուք ապրում եք այնպիսի տարածաշրջանում, որտեղ ամենօրյա շփման միջոցը վրացերենը չէ:

Դե ուրեմն, ո՞րն է լավագույն տարբերակը:

Կրկին և կրկին. բազմալեզու կրթությունը:

Հենց բազմալեզու կրթությունն է երաշխավորում, որ մայրենի լեզվով ստացած փորձը դեռահասը տեղափոխի երկրորդ և երրորդ լեզու:

Երեխաների մոտ, որոնց մայրենի լեզուն պետական լեզուն չէ, բազմալեզու դպրոցում երկրորդ լեզվի զարգացումը տեղի է ունենում նրանց մայրենիի զարգացմանը և պահպանմանը գուզահեռ: Երեխաները, որոնք մայրենիի օգնությամբ երկու և ավելի լեզուներ են սովորում, ոչ միայն լեզվական առումով են զարգանում, այլև հասնում են բարձր

մակարդակի ակադեմիական առարկաներից (Մաթեմատիկա, Ֆիզիկա, Աշխարհագրություն և այլն): Նրանք դառնում են բազմալեզու, ինչը ենթադրում է ոչ միայն այն, որ ազատ տիրապետում են և տարբեր նպատակներով օգտագործում երկու կամ ավելի լեզուներ, այլ նաև դրանց զուգահեռ զարգացնում են այլ լրացուցիչ հմտություններ ու կարողություններ:

Նախ, բազմալեզու անձի մոտ զարգացնում են ճանաչողական մտածողության հմտություններ: Նրանք դառնում են ավելի ստեղծագործ և ավելի շատ հնարավորություններ ունեն ընդհանուր առմամբ խնդիրներ լուծելու համար:

Ինչպես բազմիցս նշվեց վերևում. բազմալեզու կրթությունը ոչ թե նսեմացնում է մայրենի լեզվի դերը, այլ ընդգծում է դրա կարևորությունը դասավանդման գործընթացում: Բազմալեզու կրթության մոդելի հիմնադիրներից մեկը՝ Կումինսը, միշտ ընդգծում էր մայրենի լեզվի կարևորությունը.

**«Առաջինը միշտ առաջինն է», -**ասում էր նա, - իսկ առաջին ասելով, նա, իհարկե, նկատի ուներ մայրենի լեզուն: Ըստ Կումինսի, արդյունավետ չի կարող լինել ոչ մի բազմալեզու կրթության ծրագիր կամ մոդել, որը հիմնված չի լինի դեռահասի լիարժեքորեն յուրացված մայրենի (առաջին) լեզվական բազայի վրա: